



ԺԹ ՏԱՐԻ, ԹԻԻ 8

1861

ՕԳՈՍՏՈՍ 1

ԱՌԱԿԱԽՕՍ ՍԵՐՈՎՐԷՆ (Տես երես 193.)

ԺԵ

Բեկիաւիկն Ֆրանքլին

կամ

Աշխատութիւնն և խնայութիւնն:

Մտիկ ըրէ, ազնիւ պատանեակ. ա. մէն իժիւր կ'ըսես ու կ'ըսես ինծի որ ես բանի մը պիտի չգամ աշխարհիս մէջ, աննշան վիճակի մէջ ծնած, առանց ժառանգութեան, առանց ընչից, առանց ձեռք դնողի մը, անշուշտ եմ որ ասանկով օրերս մթութեան մէջ պիտի անցնեմ, ինծի կամ ուրիշներուն օգտակար բան մը չընելով: Բայց չէս գիտեր որ քու իշխանութեանդ տակ երկու մեծամեծ զրամագլուխներ ունիս որ ուզածիդ պէս գործածես, այն իսկ է ճարտարութիւնն ու խնայութիւնը, դրամագլուխք՝ որոնք սր և իցէ ժառանգութիւն ընկած հարստութեանն աւելի չա. հաւոր են քեզի: Երանեմով միայն Բե. իսմին Ֆրանքլին խեղճ վիճակէն բար.

ձրանալով եղաւ աշխարհիս երեւեա. գոյն անձերէն մէկը:

Կ'ուզէս գիտնալ իրեն պատմութիւն. ականջ կախէ ինծի:

Գլորմպոսնաւապետէն գտնուած երկրին մէջ, որուն իտալացի Լմերիկոս Սեսբուչիին անունը տուին, Պոսդըն քաղաքը հիմնուեցաւ, ուր 1706 յունուարի 17^{էն} ծնաւ Բենիամին Ֆրանքլին, իր 17 եղբայրներուն կրտսերագոյնը: Որովհետեւ իր հօրը ձեռքը չէր բաւեր զինքը դպրոց դնելու, հազիւ թէ կարդալ ու գրել սորվեցաւ. 12 տարեկան եղած ատենը սկսաւ մէկտեղ օ. ճառ և մամ թափելու աշխատիլ: Սիրով կ'աշխատէր պատանին. բայց ան մատաղ հասակէն սկսեալ՝ կարդալու այնպիսի անյագութիւն մը ունէր, որ եթէ ցորեկը ատեն չգտնար՝ գիշերը կը տքնէր, և ինքզինքը երջանիկ կը սեպէր երբ զուարճալի և օգտակար գիրք մը ձեռքն իյնար:

Տեսնելով Ֆրանքլինի այս ջանքն իր եղբայրներէն մէկը՝ որ տղազրութեան

կը պարապէր, զինքն իր քովն առաւ, ուր Ռենիամին ուշի ուշով ամէն բանի միտ դնելով, քիչ ատենէն կատարեալ սորվեցաւ այս նոր արհեստն ալ։ Աւրիշներէն աւելի կ'աշխատէր. և որովհետեւ մտադիր կը ջանար, աղէկ ալ կը յաջողցնէր, ու ատեն կ'աւելցնէր գրելու՝ և իրմէ աւելի բան գիտցողի մը հետ խօսելու. որովհետեւ ծամանալն ալ սրտէն չէր դուրս գալ. ու ինչպէս որ ինչպէս էր, ինչպէս էր, ինչպէս էր, ինչպէս էր։

Բայց ճանաչանալով իր եղբորը բիրտ և անշնորհք վարմունքէն, միտքը դրաւ երթալու բախտ փնտռելու, և գնաց Փիլադելփիա Ռեբիկոյ քաղաքներէն մէկը, որ յետոյ Սիւրբալ Սահանգաց գլխաւոր տեղն եղաւ, ինչպէս հիմա պիտի ըսեմ։ Այս ան քաղաքն է ուր Ֆրանքլին տարիներ անցնելէն վերջը՝ հրազինուց և բովանդակ ժողովրդեան մը ցնծալից բարեներսէն ընդունուեցաւ։ Ասկայն պատանին այն անգամուն միայնակ մտաւ Փիլադելփիա. ոչ ինքը մէկ մը ճանչնալով և ոչ ուրիշ մը զինքը ճանչնալով. անստացուած, հինգ լէրա քսակին մէջ և երեք նկան, երկուքը թւերուն տակ, իսկ երրորդը բերանը։ Բայց աշխատելու և խնայելու կամք ունենալով՝ տպագրողի մը քով մտաւ ու շահեցաւ չափաւորապէս։ Եւ իր աշխատող մը գանձ է իր տիրոջը. և եթէ տէրը բան գիտցող մարդ է, կը նայի այնպիսին ձեռքէ չհանելու։

Ասկայն Ֆրանքլին երիտասարդ ու անփորձ ըլլալով, գնաց ապաւինեցաւ խաբէբաններէն մէկուն, որոնք մեծ մեծ կը ջարդեն ու բան մը ձեռքերնէն չգար։ Այս մարդս ծով ու լեռ խոստանալով հանեց զՖրանքլին իր հանգիստ արհեստէն։ Ինչպէս տանելու համար, ապահովեցնելով որ հոն իր բաղդը կը շինէ։ Ինչպէս Ֆրանքլին, բայց օգուն մէջ շինուած այն գեղեցիկ աշտարակները բոլոր ցնդեցան. հիմա բիւրաւոր մզն հեռու հայրենիքէն, ունեցած ուղորմելի դրամը ճամբուն ծախքին վատնելով, անտարակոյս սովէն մահուան դուռը կը համներ թէ որ տպագրութե

արուեստը նորէն ձեռք առնելու չըլար։ Աստակասէր և զգօն, իր գլխաւորին աչքը մտաւ և ընկերներուն վրայ աւելի իշխանութիւն մը ունեցաւ, որոնք փողի մըն ալ խնայել չէին գիտէր, և իրենք զիրենք գինիի տուած, խաղալով ու պանդոկները ելումուտ ընելով ունեցածնին կը վատնէին։ Ինչ հակառակն Ֆրանքլին լոկ ջուր կը խմէր, երկուշաբթի օրը չէր կորսնցնէր, սահմանեալ ժամերէն աւելի կ'աշխատէր, աւելի կը վաստակէր, ճիշդ կը կատարէր պարտքերը և քսակն ու առողջութիւնը անշնորհք կը պահէր։ Իսկէ զատ նաև լողալ կը սորվեցնէր, նաևակ կը վարէր, և իր պատիւը պահելով շահելու համար ամէն ձեռքէն եկածը կ'ընէր։

Իր արուեստին մէջ աղէկ հմտանալէն վերջը՝ դարձաւ Ռեբիկոյ, ուր խելացի և բարեկիրթ պատանւոյ մը համբան ստանալով, գտաւ իրեն ստակի օգնականութիւն տպարան մը բանալու համար, և զանազան յանձնարարութիւններ վրան առաւ։ Սերովէն կ'ըսէ, որ աւելի դժուար է սկզբան մէկ «հո» մը գտնալ քան թէ վերջը հարկը։ Աստի Ֆրանքլին իր գործը աղէկ կարգի մէջ դնելով, կրցաւ դիւրին կերպով և խնայութեամբ իր բաղդը շինել։

Աւրիշներու բարիք ընելու ցանկալով, մերթ ընդ մերթ գրքոյկներ ու տետրակներ կը տպէր, որոնց մէջ բարոյական առաւելներ կ'աւելցնէր աղէկ վարք ունենալու համար, և կը ջանար իր քաղաքակիրցները վարժեցնելու խնայութեան, աշխատութեան, ուղիղ մտածելու և աղէկն ընելու։ Իհարկէ իր առաւելներէն մէկ քանին՝ որոնք առաքինաբար հարստանալ ուզողին անբաւ գանձ կ'աժեն։

Գիտէս թէ ինչո՞ւ դրացիդ երկու տեսակ կերակուր կ'ուտէ և դու չոր հաց։ Աման զի անիկայ խանութը նստած՝ բանը առաջ կը տանէր, մինչդեռ դու դեռ անկողինն էիր և կամ զրօսանայ, փճա-

խօսութե՛ն ու խաղի զբաղեր էիր: Ենա-
գան ճամբայ որ ելլես, պէտք է որ չորս
ոտքով վազես օրն 'ի բուն, և թերևս
գործքիդ կէսն անգամ չհասնիս ընելու:

Կենաց ճամբուն մէջ ծուլութիւնը
անանկ դանդաղ կը քալէ, որ աղքատու-
թիւնը թէպէտ սկզբան շատ հեռու ը-
լայ՝ շուտով անոր կը հասնի:

Յուսով ապրողը՝ նեղութեամբ կը
մեռնի. անոր համար ժառանգութիւն
չունեցողը թող տասը մատով գլխուն
ճարը տեսնէ: Օուլին ամէն բան զը-
ժուար կ'երևայ. գործունէին դիմաց
ամէն արգելք կը վերնայ: Շարտար
մարդը պարտքերը կը վճարէ. վախկոտը
վրայէ վրայ կը դիզէ: Օայլը եզն ու ա-
բօրը կը ծախէ, իսկ գործունեայն լաւ
գինի ու ճոխ շտեմարաններ կը դիզէ:

Հաճոյք, առատութիւն և պատիւ
միշտ ճարտարութե՛ն ետևէն կ'երթան:

Սանր ծախքերը շատնալով մեծա-
մեծ ժառանգութիւններ կը վատնեն:
Թի՛ որ աւելորդ բաներ գնելու ըլ-
լաս, հարկաւորները ծախել կը ստի-
պուիս: Ստակ մը ծախելէ դառաջ կրկին
ու կրկին մատուրներուդ մէջ պտըտցուր
և մտածէ թէ քանի սուղի նստաւ քե-
զի ան ստակը շահիլը:

Կ'ուզէս իմանալ ստակին յարգը. փոխ
առ ուրիշէն, ու կը տեսնես թէ որչափ
մերժումն ու թուքումը կ'ընդունիս
առանց ուղեւորդ: Ս'ի որ շատ պարտք
կ'ընէ՝ ազատութիւնը կը կորսնցնէ, և
հազարումէկ մահացումանց մէջ կ'ել-
նայ: Ելլաւ է որ առանց ընթերլու
պառկիս քան թէ առտուն պարտքերով
արթըննաս:

Տանտիրոջ աչքը ձեռուրներէն աւե-
լի բան կը տեսնէ:

Բան մը առաջ տանիլ կ'ուզես նե՛
անձամբ դնա. թէ չես ուզեր՝ ուրիշը
խրկէ:

Քիչը՝ շատ անգամ կրկնուելով կը
շատնայ:

Եւելի դիւրին է առջի փափաքը զըս-
պել, քան թէ կատարել անկէ առաջ
եկած փափաքները:

Տղաք և խենթերը կը կարծեն որ 20
տարին ու 20 լէրան յաւիտեանս պիտի
չմըննան:

Հաւատարիմ և սիրելի ծառայ մը
կ'ուզես ունենալ. դու քեզի ծառայէ:

Պիտութիւնը ուսումնասէր մարդուն
է, հարստութիւնը աչքաբացին՝ ինչպէս
իշխանութիւնն ալ քաջութեան, և
երկինք՝ առաքինւոյն:

Բաղդին աջ ձեռքը ճարտարութիւն
է, ձախը չափաւորութիւն:

Թանկագին են փորձին տուած դա-
սերը, բայց անմիտները ասով միայն կը
կրթուին:

Խենթին նետած դահկանը խելա-
ցին կը ժողվէ, լաւ գիտնալով թէ ոսկին
ինչ բանի կու գայ, և ասանկով դահե-
կանը չկորսուիր: Անայնամիտ և սնա-
պարծ մարդը փառաւոր բազմաժախտուն
մը կը շինէ, աղուոր կահկարասիքով կը
զարդարէ, կ'ուռի և կը զուարճանայ,
ու քանի մը օրէն մոխրի վրայ կը նստի.
բայց որմնադիրներն, հիւսնները, դար-
բինները և ուրիշ գործաւորները որոնց
ինքը աշխատութիւն տուաւ, կրնային
ան ստակով իրենց աղքատ ընտանիքը
ոտքի վրայ պահել ու խնամել:

Եմէն զեղխութենէ աւելի ժամանա-
կին վատնումը գէշ է. ժամանակը դի-
պակ մը կը նմանի որով կեանքերնիս կը
հիւսնենք:

Հպարտը շայլութեամբ նախաճա-
շիկ կ'ընէ, աղքատութեամբ կը ճաշէ,
ամօթով կ'ընթրէ:

Օ ուարձութիւնը իրմէ փախչողին
ետեկէն կ'երթայ :

Իմ հայրս բնաւ սեղանը կերածնե-
րուն վրայ բերան չէր բանար, և ոչ
ուշ կը դնէր աղէկ եփուած են թէ
գէշ, անհամ թէ ախորժեղի, շատ թէ
քիչ համեմուած, իրարմէ լաւ թէ
ստորին : Ենոր համար ես ալ 'ի ման-
կութենէ վարժեցայ այս տեսակ բա-
ներու խելքս չտալ, և որ և իցէ ուտելիքի
անտարբեր աչքով նայիլ . և մինչև այս
օրս անանկ անփոյթ եմ կերածիս որ
քանի մը ժամ վերջը հարկ կ'ըլլայ մը-
տածել թէ ինչ կերայ :

Ի՞նչ որ չարերը գիտնային բարի ը-
լալուն օգուտները, գոնէ իրենց օգտին
համար մէյմէկ առաքինի անձինք կ'ը-
լային :

Խոստմանդ վրայ կենալով համբաւդ
պահէ . պատիւդ՝ պարտքերդ վճարե-
լով . բարեկամներդ՝ կարեկցութեամբ
և երախտագիտութեամբ : Չկարծա-
ծէ՞դ աւելի շուտ աս բաներուս կրնաս
պէտք ունենալ :

Վաւ աւելցուցածդ կարօտեալներուն
մեծ օգնութիւն մը կրնայ ըլլալ . ոմանց
առողջութիւնը կրկին կը պարգևէ, այ-
լոց կեանքը կը փրկէ, շատերուն ալ ի-
րենց աղէկ անունն ու պատիւը կը պա-
հէ . երբեմն գուրիշը գոհ կ'ընէ . միով
բանիւ նախանձելի պարծանք մըն է, որ
կարեկից սրտի մը համար քաղցր և սի-
րելի յուզմունքներու պատճառ կ'ըլլայ :

() տարական մը Լ'մերիկա որ հաս-
նելու ըլլայ, չեն հարցըներ տեղացիք
թէ ինչ աղգէ, ինչ տունէ է, այլ
թէ բանի եկող մարդ է . կը մեծարեն
արուեստաւորներն ու գործաւորները,
որովհետեւ անոնց ճարտարութիւնը տե-
լութեան օգտակար է : Աստուծոյ ինչ
նէն, կ'ըսեն, Կիւլիէրայ ճարտարապետն է .
և ինչ աւելի շինքը ինչպէս գէշն է .
և ինչ արհեստի ինչպէս գէշն է : Եւ
մեծարենք իր ցեղակիցներուն պէսպիսի
ընտան, օգտակարութեանը և հարաբերու-

թեանցը համար, քան թէ իր հինաւորաց
ընտան համար :

Տիեզերաց Լ'ըրարին այնպէս գլծած
է՝ որ կ'ուզէ որ որչափ կենաց վերջերը
հասնինք, այնչափ աւելի աս աշխարհ-
քէս բաժնուելու պատճառները մեր
վրայ զօրանան : Կենաց վերջի վայր-
կեանքներուն կրած ցաւերնիս անոր հա-
մար են որ զգուինք աշխարհէս՝ ուր
ալ չենք կրնար մեր պաշտօնը կատա-
րել . . . Եւ յետոյ կը մխիթարուինք
մտածելով որ դատարկ կեանք մը չան-
ցուցինք, և թէ գերեզմանէն դուրս
տեղ մը կայ ուր ամենայն բարեգործ և
առաքինի մարդիկը նորէն զիրար պիտի
տեսնեն :

Ֆրանքլին միտքը դրեր էր բնաւ չը-
սելու հասարեաւ, անվրէպ, անհարաւայն,
էնթուստ, և այլ աս տեսակ ձեւեր, ո-
րոնք ուրիշ կերպ մտածողին տհաճու-
թիւն կը պատճառեն, և ստեպ ամօ-
թով կը ձգեն այս խօսքերս ըսողը, երբ
սիտալ ըլլայ իր կարծիքը : Եւ միշտ իր
մտածութիւնները տարակուսելով մը
կ'ըսէր . Ինչո՞ւ, ինչո՞ւ էնթուստ, Կար-
ծէ՞, Կարծէ՞, Կարծէ՞ անոնք ինչ Կարծէ, Կարծէ :

Կ'ուզէս իմանալ Ֆրանքլինի հնա-
րած մէկ ինայողական լապտերը . կա-
նուի պառկէ, կանուի արթնցիր : Բաց
'ի ձէլին խնայելէն, առողջութիւն ալ,
հարստութիւնն ալ ու գիտութիւնն ալ
կը պահուի : Ուստի կ'ըսեն Վերմանա-
ցիք . Աստուծոյ ծառայողն Բեթանը ոտնով
չեցան է :

Ի՞նչ տեսած ես քանի մը տունե-
րու մէջ Ֆրանքլինի հնարած վառա-
րանները, զորոնք ինքը ճարտարեց քիչ
փայտով շատ տաքութիւն ունենալու
համար :

Ինքը եղաւ առաջինը որ Փիլադել-
փիոյ մէջ կրակ մարելու մարդիկներ
սահմանեց, ու սորվեցուց իր քաղաքա-
կիցներուն որ միայն մէկին չկրցա-
ծը բազմութեամբ ընեն, այսինքն ըն-
կեր գրուելով : Եւ մեծ ձեռնարկով
մը, նոր բարեգործական ընկերութիւն

մը որոնց համար մեծամեծ դրամոց գու-
մարներ հարկաւոր ըլլան. խել մը հոգի
միանալով իւրաքանչիւր ոք կը հանգա-
նակէ. քիչը քիչով կը շատնայ. և այն
շատցածով բարերարութեան կամ հա-
սարակաց օգտակար գործը կ'ըլլուի:
Ըստ կերպով Ֆրանքլին հայրենեաց
պաշտպանութե ընկերութիւն մը կան-
գնեց, որուն տասնըմէկ հազար հոգի կա-
մաւոր անդամ գրուեցան: Ինչուան ան
ատեն Փիլադելփիա գալորոց չէր բա-
ցուած. ինքը ընկերները գտնելով կրցաւ
գալորոցներ շինել ու անոնց ապրուստը
հայթայթել. ասանկով հիւանդանոց
մընալ շինեց, և հրդեհներէ վնասուած
ներուն օգնութեանն համար ալ դրա-
մագլուխ մը դրաւ:

Ըստ խելի՞ պատանին իր սուր դիտո-
ղութքը գիւտեր հնարելու փառքն ալ
ժառանգեց, և երեւելիներն են ելեկտրա-
կանութե վրայ ըրած զննութիւնները:
Կ'ուզէս տեսնալ ելեկտրական հուրը.
այս գիշեր մութով երբոր կատուն ծըն-
կանդ վրայ ցածքէ ու քնանայ՝ կամացուկ
մըջոյ՜ զինքը մազերուն պառկած դիրքո-
վը, և վերջն ալ հակառակ կողմովը, և
կընայիս որ աղօտ ձայնով մը նուաղ
կայծիկներ կ'ելլան. և կամ առ դո՛՛՛
մը ու աղէկ շփելէն վերջը թղթի մը մո-
տեցուր և կը տեսնաս որ իրեն կը քաշէ:
Ըրդ այն զօրութիւնը որ թուղթը կը
քաշէ և կատուին մազերէն ձայն կը հա-
նէ, էնոյնը որ կը փայլատակէ և կ'որո-
տայ ու ամպերէն իյնալով կայծակ ու
կրակ կը թափէ:

Ֆրանքլին գտաւ որ բոյսերն ու մե-
տաղներն ալ կը քաշեն այս զօրութիւնը, և
այսպէս նաև օդը կը ցնցուի բոցէն ու
շարժմունքէն. անոր համար վնասակար
է մրկի ատեն ծառերու տակ ապաստա-
նիլը, վաղէն ու զանգակ քաշելը: Շատ
փորձեր ընելէն վերջը հնարեց նաև
շանթարգելն, որ են զանգակատանց ու
պալատներու ծայրը տնկուած երկաթ-
ները: Կլեկտրական հուրը ամպերուն
մէջ խտանալով, կամաց կամաց այն եր-
կաթներուն վրայ կը ծանրանայ, որոնց

թելերուն վրայէն կ'իջնայ գետնին
տակն ու հոն կը մարի, մինչդեռ առանց
շանթարգելի կրնար շէնքերը կործանել
ու մահ բերել:

Տես ուսման ըրածը. մինչեւ շանթե-
րուն տէր եղաւ:

Ըստ և ասոնց նման ուրիշ գեղեցիկ
գիւտերէն ու վարդապետութիւններէն
զատ՝ Ֆրանքլին ժամանակ կը գտնար
նաև իր արհեստին զբաղանացը, որոնք
ոչ միայն զինքը փառաւորեցին պատուով
ու ճոխութեամբ, այլ նաև իր աղքը.
և երբ 71 տարեկան ծերութեանը մի-
ջոց Լաւրոպա եկաւ օգնութիւն գտնա-
լու, ամէն տեղ հիանալեօք և սիրով
ընդունուեցաւ. գրագէտք, իշխանք, ժո-
ղովուրդք, իմաստունք, արհեստաւորք
զիրար կը ջանային գերազանցել զինքը
մեծարելու մէջ. բայց նա արքունեաց
գեղեցութե մէջն ալ կը պահէր իր ան-
պաճոյճ զգեստը, որովհետև արտաքին
զարդարանքի կարօտութիւն չունէր աչ-
խարհքի ցուցնելու համար թէ ինքը
մեծ բնագէտ, մեծ մարդասէր ու մեծ
հայրենասէր է: Հրաւերքի մը ատեն, զոր
տուին 'ի պատիւ Ֆրանքլինի, 300 տիկ-
նայց մէջէն գեղեցկագոյնը ընտրուե-
ցաւ: Ըմերիկացի ծերունւոյն սալիտակ
մազերը գալինի պսակով մը պսակելու
համար 'ի նշան համաշխարհի զարմա-
նաց:

Սեբաստիան 1783-ին ստորագրեց Ռա-
րիզու մէջ իր հայրենեաց խաղաղու-
թեանը դաշնագիրն. և երբ դարձաւ
Ըմերիկա՝ ամբողջ բարերարեալ ժո-
ղովրդեան մը արտասուօքն ու ծափա-
հարութեքը ընդունուեցաւ, և շքեղ ու
պերճ յաղթանակով մտաւ Փիլադել-
փիա՝ ուր վաթսուն տարի առաջ ցամաք
հաց մը կը ծեւելու մտեր էր:

Հոն փառաւորութեամբ ասրեցաւ
մինչև 1790 ապրիլի 17-ը: Իր յետին
գրուածքը եղաւ խափշիկները վաճառե-
լու բարբարոս սովորութեանը դէմ, զո-
րոնք իրենց հայրենիքէն յափշտակելով
Ըմերիկա կը տանէին անբանի պէս աչ-
խատցընելու և մասնաւորապէս շաքարի
եղեգան մշակութեանը համար, ու հոն

տառապեցընելով ծեծի տակ կը մեռ-
ցընէին :

Վեզի գաղափար մը տալու համար
թէ ինչպէս յօժար ու խնամոտ էր բա-
րերարելու , կ'ուզեմ առաջ բերել իր
մէկ թուղթը զոր գրեց մէկու մը , լսե-
լով որ կարօտութեան մէջ է :

Բարեկամ ,

Նամակիս մէջ 20 ոսկի լոտի պիտի գըպ-
նաս , այլ գիտցիր որ միտքս չեղի պարգևել
չէ այս գոմարս , այլ միայն խիստ պաւ . եթէ
Բանդ յոյնի խիստանալ ինծի դարձնելու պար-
գոսի խոնկին ճանչցած հարօտ մարդոք , այ-
սոս պայմանաւ որ եւ որ ինքն ալ վասպընի
դանի պայ ուրիշին նովին դաշմէ : Շատ
առնեալ չըլլալու չեմ կրնար ուղած Բարեկա-
մնէ . ահոր համար պարտաւորեալ եմ այս-
պէս ընելու որ չիլով շատերուն ծառայու-
թեան ընեմ , առանց զիս շատ նեղը խօսե-
լու : Ողջ լի :

22 Ապրիլ 1784

Ֆրանսիէն

Որպէս զի իր բարեգործութիւնները
կեանքին հետ մէկտեղ չըմբնան , խել
մը դահեկան ձգեց կրթարանաց հա-
մար , որոնց մէջէն 50,000 Քրանգը ,
զորոնք այլ և այլ պաշտօններով շահեր
էր , թողուց որ բարեկիրթ երիտասարդ

արուեստաւորաց փոխ տան որով կարե-
նան իրենց խանութը բռնել . պայման
դնելով որ 100^ն 5 վճարեն , և այս վը-
ճարքը որ 100 տարիէն վեց միլիոն ու
կէսի պիտի հասնէր , սահմանեց որ մե-
ծաւ մասամբ կամուրջ , փողոակ , բա-
ղանիք , ճամբայ և ջրմուղ շինելու գոր-
ծածեն , ու մնացածը նոյն կերպով փոխ
տան այն արուեստաւորներուն՝ որոնք
Ֆրանքլինի պէս աղքատութեամբ ու
միանգամայն վաստակասիրութեամբ կը
սկսին իրենց ասպարէզը :

Արտեսնէս ուրեմն , բարի պատանեակ ,
որ Ֆրանքլին ալ քեզի պէս աննշան
տղուն մէկն էր . չունէր ոչ հարստութի ,
ոչ ազգականութիւն , ոչ պաշտպան .
բայց իր արժանաւորութիւնը , աշխա-
տելու և խնայելու կամքը , ժամանակին
աղէկ վարումն ու լուութեամբ համբե-
րելը , այն ողորմելի գուհիկ տղան փար-
թամացուցին և պարգևեցին իրեն մե-
ծամեծ պատիւներ ու այնպիսի փառք
մը որուն նմանը պիտի չըլլայ : Իր մա-
հուանը վրայ Սիւսեալ Նահանգնե-
րը երկու ամիս սև հագան . Լըրոպա
ամէն տեղ վրան արցունք թափեցին . և
իր անունը պիտի մնայ անոնց մէջ որք
ճշմարիտ փառք ստացան , այսինքն բա-
րերարել եղբարց , հայրենեաց և բո-
վանդակ ազգի մարդկան :

Կը շարունակուի :

ԱՂՈՐՔ

Փառք 'ի մուտս արքայն տունջեան լուսազգեաց
Վայ իջանէ յուշիկ յաղթողն 'ի կառաց .
Շողի անօտր անտես աչաց շողշողեալ ,
Բզհետան յերկինս ունի յակօսս ոսկեփայլ ,
Լըրինեալ զեթերս ըսփիւռ ծաւալ ծիրանի .
Լուսինն հանգոյն ոսկեայ առ կախ լապտերի ,
Ի կապուտակ անդ կամարին յեզր 'ի ճօճ ,
Շողք իւր նըւաղք 'ի դալարեաց նիրհէ ծոց .
Լը ըզերամբ քօղ ծաւալի զիշերոյն :